# ՀՀ ԿԳՄՄՆ <<Մարտունու Տ.Աբրահամյանի անվան ավագ դպրոց>> ՊՈԱԿ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա -** Սովորողների ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը անգլերենի դասավանդման ընթացքում

**Դպրոց-** Արտավանի միջնակարգ դպրոց

**Ուսուցիչ -** Իզաուրա Ուստյան

**Ղեկավար -** Կիմա Օհանեսյան

**ՎԱՅՔ 2023**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

1. Հետազոտության թեմայի արդիականությունը.....4
2. Սովորողի ինքնուրույնության ու նախաձեռնողականության զարգացումը դպրոցում՝ որպես ուսուցչի առաջնային նպատակ.....5
3. Լեզվական կարողությունների և հմտությունների կողքին սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը անգլերենի դասավանդմանընթացքում.....8
4. Դասավանդման իմ փորձից.....11
5. Եզրակացություններ.....14
6. Առաջարկություններ.....15
7. Օգտագործված գրականություն և էլեկտրոնայինռեսուրսներ.....16

# Ներածություն

Ինչպես գիտենք Ժամանակակից կրթական համակարգը սահմանում է նոր կարողունակությունների համակարգ թե՛ սովորողների, թե՛ դասավանդողների համար: Դա հիմնականում պայմանավորված է ժամանակի նոր մարտահրավերներով, որոնց հիմքում ընկած են գիտատեխնիկական առաջընթացը, տեխնիկայի արագ զարգացումը: Նորագույն տեխնոլոգիաների ներդրման պայմաններում կրթական ոլորտը ամենօրյա ռեժիմով կարիք ունի բարեփոխումների ու արդիականացման, ընդ որում ոչ միայն դասավանդողներն են զինվում համապատասխան նոր մեթոդամանկավարժական գիտելիքներով, այլև գնալով փոխվում է նաև սովորողի դերակատարումը. վերջինս ևս հնարավորություն է ստանում դուրս գալ կաղապարներից ու ավանդական կարծրատիպերից՝ դառնալով հետազոտող, վերլուծող, քննադատող, սովորեցնող, կշռադատող, փնտրող: Այս ունակությունների ամբողջությունը սովորողին դարձնում է ինքնուրույն, նախաձեռնող, հնարավորություն է տալիս զարգանալ, ինքնակրթվել: Նոր ինտերակտիվ մեթոդների ներդրումը հնարավորություն է տալիս սովորողին դառնալ դասի ընթացքի անմիջական կառուցողը,ինչի արդյուքում դասապրոցեսը դադարում է սովորողի համար լինել ձանձրալի, ավելին՝ սովորողը մոտիվացվում է, իսկ այդ մոտիվացիայի պատճառներից մեկն էլ աշակերտակենտրոն ուսուցումն է: Փաստորեն, կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և սովորողի դերի ու գործառույթների վերաարժևորում: Օտար լեզուները ընդլայնում են սովորողի աշխարհայացքը, նպաստում հաղորդակցմանը: Օտար լեզվի դասավանդումը ինչպես աջակցում է սովորողների ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը, այնպես էլ վերջիններիս մոտ ձևավորում են նոր հմտություններ ու կարողություններ: Սովորողի համար շոշափելի հաղթանակ է օտար լեզվով ազատ հաղորդակցվելու կարողությունը: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ այս վերջնարդյունքը պահանջում է երկարատև ու համակարգված աշխատանք:

*Հետազոտության թեմայի արդիականությունը:* Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի շրջափուլում կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներով, համաձայն որոնց՝ ուսուցիչն ամեն կերպ պետք է խթանի սովորողի ինքնուրույն մտածելու, կշռադատելու, որպես նախաձեռնող հանդես գալու, ստեղծագործական մտածելու ունակությունները:Կարծում ենք ,որ ժամանակակից կրթական տեխնոլոգիաների և նորարարական մեթոդների ներդրումը կրթական համակարգում ,կարող է լուծել ոլորտում առկա բազմաթիվ հիմնախնդիրներ:Արդյունքում սովորողն ինդեգրվում է դասի մեջ՝ զուգահեռ ձեռք բերելով ինքնուրույնություն ,նախաձեռնողականություն,ստեղծարար մտածողություն:Հենց այս արդյունքի դրական ելքով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

*Հետազոտության նպատակը:* Շեշտադրել աշակերտակենտրոն դասի դերը սովորողների համագործակցային, նախաձեռնողական, ստեղծագործական և այլ կարողությունների ձեռքբերման ու զարգացման գործում, ինչպես նաև ցույց տալ անգլերենի դասավանդման շրջանակներում ուսուցչի դերը թվարկած կարողությունները ձևավորելու հարցում:

*Հետազոտության խնդիրը:* Հետազոտության խնդիրն է սահմանել դասի ընթացքին սովորողի ներգրավվածությունը, վերջինիս նախաձեռնողական գործելաոճն ապահովելու համար ուսուցչի կողմից կատարելիք քայլերը, ինչպես նաև արդի կրթական նորարարությունների դերը այդ համատեքստում:

## *1.1 Սովորողի ինքնուրույնության ու նախաձեռնողականության զարգացումը դպրոցում՝ որպես ուսուցչի առաջնային նպատակ:*

Գաղտնիք չէ, որ մարդն իր գիտելիքի կարողությունների ու հմտությունների հիմնական պաշարը ստանում է հանրակրթական ուսումնական հաստատությունում, որտեղ կայանում է անձի կրթական ու դաստիարակչական առանցքային գործընթացը, ուստի հենց այստեղ է, մանուկը, պատանին , դեռահասը սկսում գործել ինքնուրույն, հանդես գալ նախաձեռնողի դերում:

Նախաձեռնողականությունը նորարարությունների հանգեցնող մտքերի ակունքն է: Այն մեկ հարթության վրա է բերում տարբեր մարդկանց՝ միավորելով նրանց հանուն մեկ գերագույն նպատակի: Պակաս կարևոր չէ ինքնուրույնությունը, որի համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն: Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները՝ ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում: Մանկության տարիներին ազատ և դերային խաղերի առաջադրմամբ երեխային կարելի է ուղղորդել, հետևել նրա ընտրության սկզբնական քայլերին, սովորեցնել պատասխանատվություն կրել սեփական ընտրության համար: Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի դրսևորումները դպրոցում կարելի է դիտարկել մի քանի տեսանկյունից: Եթե վերցնենք ուսուցչի ուղղակի ներգործությունը սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողականության գործունեության բարձրացման վրա, ապա հարկ է արձանագրել, որ դա մեծապես կախված է վերջինիս մանկավարժական ու անձնային որակներից: Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ որակները:

**Ուսուցչի մասնագիտական որակներն են՝**

- հանդուրժողականությունը, սեփական աշխատանքը ծրագրելու և կազմակերպելու, ուսուցման գործընթացն արդյունավետ իրականացնելու, մասնավորապես ավանդական և ժամանակակից մեթոդները զուգորդված օգտագործելու, անվտանգ ուսումնական, հոգեբանական և դաստիարակող միջավայր ստեղծելու կարողություն;
- նորը զգալու և ընկալելու կարողություն, գենդերային անկողմնակալություն;

·քննադատական մտածելակերպ, սեփական գործունեությունը մշտապես վերլուծելու, վերանայելու, ճշգրտելու և կատարելագործելու ցանկություն և կարողություն;

·սովորողի իրավունքների պաշտպանի, երեխային համաձնավորողի, ուսումնադաստիարակչական գործընթացը երեխայի համար հեշտացնողի դերերը մասնագիտական բարձր որակով կատարելու ցանկություն և կարողություն;

·դպրոցի, դասարանի և նրանում կատարվող բոլոր իրադարձությունների և փոփոխությունների մասնակիցը լինելու պատրաստակամություն:

·կրթության ոլորտին և իր մասնագիտությանը վերաբերող հիմնախնդիրներին իրազեկ լինելու և դրանց լուծման ուղիների մասին սեփական կարծիք և ակտիվ մասնակցություն ունենալու գիտակցություն և կարողություն:

**Ուսուցչի անձնային որակներն են՝**

· սերը երեխաների նկատմամբ , համբերություն, օբյեկտիվություն, անարդարության նկատմամբ անհանդուրժողականություն;

·քաղաքացիական օրինապաշտություն, քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները զուգորդելու գիտակցություն , հարգանք երեխայի ազատության և իրավունքների նկատմամբ ու դրանք պաշտպանելու պատրաստակամություն և կարողություն;

•մշտապես ինքնակրթությամբ և ինքնակատարելագործմամբ զբաղվելու գիտակցություն և մասնագիտական ու ընդհանուր զարգացումը պլանավորելու և իրականացնելու կարողություն: Կրթության ցանկացած ոլորտում անհնար է որևէ բարեփոխում իրականացնել առանց ուսուցչի մասնակցության և աջակցության: Նա պետք է գիտակցի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն և բարոյական որակներ, մշտապես կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ: Ուստի և սովորողի հաջողությունը այս համատեքստում ուղիղ համեմատական է ուսուցչի

մասնագիտական և անձնային որակներին, քանզի այս պարագայում վերջինս ոչ միայն սովորեցնողի դերում է, այլ նաև համակարգողի, ուղղորդողի, խորհրդատուի: Սովորողի ինքնուրույնության և նախաձեռնողական վարքագծի մյուս օղակը հենց սովորողն է: Այս պարագայում կարևոր է, որ սովորողն ինքնուրույն գա այն գիտակցմանը, որ այսօրվա ամբարած գիտելիքը, կարողությունն ու հմտությունը իր բարեկեցիկ ապագայի հիմնասյուներն են: Սովորողն ունի հստակ իրավունքներ և պարտականություններ, որոնք պետք է քաջ գիտակցի:

ՀՀ Հանրակրթության մասին օրենքի 20-րդ հոդվածը, որով սահմանվում են սովորողի իրավունքներն ու պարտականությունները, նշում է. «Ուսումնական հաստատություններում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Սովորողն իրավունք ունի ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն : Ստացվում է, որ սովորողները հաճախ շրջանցում են օրենքով նախատեսված իրենց իրավունքը՝ հիմնավորելով, որ նոր տեխնոլոգիաներն իրենց ավելի հանրամատչելի գիտելիք են տալիս, քան ուսումնական գործընթացի ընթացքում՝ ուսուցիչը: Անշուշտ, դժվար է համաձայնվել նմանօրինակ կարծիքների հետ, այդուհանդերձ սա ունի իր օբյեկտիվ պատճառները: Հատկապես միջին և ավագ դպրոցի սովորողները, ովքեր այս կամ այն չափով տիրապետում են ՏՀՏ գործիքներին, նոր տեխնալոգիաներին, համացանցային տեղեկատվական հարթակներին, այլևս չեն բավարարվում դասարանային գիտելիքներով: Հենց նմանօրինակ խնդիրների լուծմամբ է պայմանավորված կրթական համակարգի արդիականացումը, նոր ու հետաքրքիր մեթոդների ու հնարների ներդրումը դպրոցում, ՏՀՏ դասերի, հետազոտական ու անհատական աշխատանքների իրականացումը, դասի ընթացքում տեսաֆիլմերի դիտումն ու տեսասահիկների պատրաստումը: Նման համալիր միջոցառումներն ունակ են ամենաանտարբեր սովորողին անգամ բերել դեպի դասը: Ստացվում է, որ ուսուցիչը կառավարելի է դարձնում սովորողի մուտքը համացանց՝ դա

օգտագործելով ի շահ նրա: Արդյունքում՝ սովորողը կտրվում է զանազան անբովանդակհամացանցային հարթակներից՝ տեխնոլոգիան օգտագործելով տեղեկատվության հավաքագրման, ընթերցանության և այլ օգտակար նպատակներով: Նման նորորարական մոտեցումները հիմնականում արդյունավետ են աշխատում, քանի որ սովորողն ազատ ժամանակ ինքնուրույն է գործում, նախաձեռնում հետաքրքիր նախագծեր ու կիրառում դրանք:

1.2 *Լեզվական կարողունակությունների և հմտությունների կողքին սովորողի ստեղծագործական ունակությունների զարգացումը անգլերենի դասավանդման ընթացքում:*

Ստեղգործական մտածողության ձևավորման ու զարգացման այսօրվա կրթության գլխավոր նպատակներից մեկն է:Սովորողների ստեղծագործական մտածողության ,կարողունակությունների ձևավորումն ու զարգացումը մասնավորապես անգլերենի դասերին ևս դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ ու կրթության կարևոր խնդիր:

Սովորողների ստեղծագործական մտածողությունը կարևոր հանգամանք է ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու ,առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու ,նոր գաղափարներ իրականացնելու հարցում :

Հայտնի է,որ օտար լեզուն ,որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը,զարգացնում նրանց ճանաչողական կարողունակությունները,խոսքն ու մտածողությունը ,ուստի և օտար լեզվի դասավանդման ընթացքում կարելի է սովորողի մոտ մի շարք այլ լրացուցիչ կարողունակություններ:

Սակայն ինչպես գիտենք, ուսումնական գործնթացի արդյունավետությունը կախվաց չէ միայն շահառու մեկ կողմից:Միայն բացառապես ուսուցչի ջանքերով հնարավոր չե հաջողել:Այս համատեքստում կարևոր կլինի ասել,որ դասավանդման մի շարք հնարների,զանազան գործիքների կիրառումը ուսուցչին թույլ են տալիս կառավարելի դարձնել դասարանը:Եթե դասը հետաքրքիր

է,ակտիվ,ապա հաճույքով է մասնակցում դասին։Օտար լեզուներ բնակավայրի դասնթացները նպատակաուղղվաց են Հանրակրթության պետական չապորոշչով սահմանված հետևյալ կարողունակությունների ձևավորմանը։

- հայրենասիրություն ,ազգային,պետական,հասարակական շահերի և առաջնահերթությունների գիտակցում տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում,քաղաքացիական պարտքի կարևորումն։
- մայրենի և օտար լեզուներով արդյունավետ հաղորդակցվելու հմտություններ,լեզվական գրագիտություն 'որպես ուսումնառության համապիտանի գործիք։
- բնության և հասարակության փոդազդեցությունների ճանաչում ,դրանց հետևանքների գնահատում ' կայուն զարգացման համատեքստում ։
- տեղեկատվական հոսքի մեջ կողմնորոշվելու հմտություն և մեդիագրագիտություն։
- սեփական ինքնության,ընտանիքի,համայնքի և պետության արժևորում։
- ազգային համաշխարհային հոգևոր և նյութական ժառանգության և մշակութային բազմազանության արժևորում և գրագիտություն,գրականության և արվեստի իմացություն,ճաշակ։
- հասարակաության կյանքի (մշակութային,պետիրավական ժառանգության և տնտեսական ոլորտներ) ճանաչում և անկողմնակալ ընկալում և այլն։

Հարկ է նշել, որ գոյություն ունեն օտար լեզու դասավանդելու տարբեր մեթոդներ: Ճիշտ մեթոդի ընտրությունը հաջողության գրավականներից մեկն է, և դրանով է պայմանավորված ուսման պրոցեսի արդյունավետությունը:

Օտար լեզուները ընդլայնում են սովորողի աշխարահայացքը,նպաստում է հաղորդակցման և հանրամշակութային կարողությունների ձևավորմանը,լեզվական նորմերի ընկալմանը և գիտակցմանը,ինչպես նաև աջակցում են սովորողների ընդհանուր խոսքային կարողությունների զարգացմանը։Այս ամենը նպաստում դպրոցականների լեզվաբանական կրթության հիմունքների ձևավորմանը։Օտար լեզվով շփումը կարգավորում է անհատի վարքը,խթանում այս կամ այն խոաքային

գործունեությունը,համագործակցությունը։Այն նպաստում է անձնավորության արժեքային կողմնորոշիչների ,հայացքների և համոզմունքների ձևավորմանը,ծառայում է սովորողի վարքի և փոխհարաբերությունների ,խոսքային կարողությունների զարգացմանը ,ինչը դրսևորում է խոսքային էթիկայի նորմերի պահպաման միջոցով։ Պայմանականորեն դասավանդման մեթոդները կարելի է բաժանել 2 խմբի'ավանդական և ժամանակակից։Ավանդական ենք անվանում զննական ,բացադրական այն մեթոդներին ,որոնց հիմքում ընկաց է գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին, իսկ ժամանակակից մեթոդական համակարգը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում,մտապահում և վերարտադրություն այն ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքի,հմտության ,կարողության ձեռք բերում։Ինտերակտիվ մեթոդամանկավարժական հնարներից անգլերենի դասաժամին կարելի է կիրառել'ԳՈՒՍ,Տ-աձև աղուսյակ ,Մ-աձև աղյուսակ,Շրջագայություն անցած թեմաների էջերով ,Զնագնդի։Նմանօրինակ հնարների կիրառումը սովորողի առաջ բացում է ստեղծագործ մոտոցումներ ցուցաբերելու լայն հնարավորություններ։Այս կերպ դասի փուլերը հստակ տարանջատվում են ,լրացնում միմյանց, ինչն իր հերթին նպաստում է,որ դասարանը չկորցնի ակտիվությունը։Ընդհանրապես, դասապրոցեսը կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ լսարանի, իսկ մեր դեպքում՝ հայերի ազգային առանձնահատկությունները, սովորությունները, պատմությունը, մշակույթը, հետաքրքրությունների ոլորտը։

Անգլերի դասին շատ կարևոր է նոր նյութի հաղորդումը։Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը,որ աշակերտը չի կարող միանգամից շատ բան սովորել։Հետևաբար' նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի,որպեսզի չգերազանցի այդ ծավալը։Ծավալը գերազանցելու դեպքում աշակերտի աշխատանքային հիշողողությունը չի կարողանում հասկանալ նոր նյութը։Այդ առումով նոր նյութը բացադրելիս շատ կարևոր է այն փոքր կտորնորով բացադրելը։Նյութը

ներկայացնելուց հետո անհրաժեշտ է կանգ առնել ,հարցերի միջոցով պարզել՝ արդյոք հասկանում են երեխաները նոր ներկայացվաց նյութը,ապա գտնել իրավիճակային լուծումներ։Առհասարակ համագործակցային ուսուցումն բավականաչափ նպաստավոր է սովորողներին ակտիվ դաշտում պահելու տեսանկյունից։

Նորագույն տեխնոլոգիաներով հեղեղվաց այս ժամանակաշրջանում մանկավարժի գործառույթներից է նաև սովորողին դեպի կրթության շահագրգռելը ,մոտիվացնելը ,խոսուն ու գործնական օրինակներով կրթության դերն ու նշանակությունը կարևորելը,վերջինիս մոտ ինքնուրույնության ,նախաձեռնողական ու ստեղծագործական ունակությունների ձևավորելը։Մանկավարժական աշխատողը պարտավոր է սովորողնորի մեջ զարգացնել ինքնուրույնություն ,նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ։Հենց այդ նպատակներից է բխում ուսուցչի կողմից նորագույն մեթոդներին,զանազան տեխնոլոգիական նորարարություններին դիմելն ու տարբեր տիպի ու նշանակության դասեր իրականացնելը։

Ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր կրթության գլխավոր նպատակներից մեկն է:

Սովորողների ստեղծագործական մտածողության կարողությունների ձևավորումն ու զարգացումը մասնավորապես անգլերենի դասերին ևս դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Սովորողների ստեղծագործական մտածողությունը կարևոր հանգամանք է ժամանակակից աշխարհում նորանոր հաջողություններ ունենալու, առկա խնդիրներին հեշտ լուծումներ տալու, նոր գաղափարներ իրականացնելու հարցում: Ստեղծագործական մտածողությունը լավագույն միջոց է դուրս գալու կաղապարված մտածելակերպից, ընդլայնելու երևակայությունը: Օտար լեզուների ուսուցման համար լեզվաբանության մեջ առկա մեթոդներից առավել հայտնի և ամենաշատ կիրառվող մեթոդները հետևյալներն են.

- ակտիվ ուսուցման մեթոդ /active learning method/

- երկլեզու մեթոդ /bilingual method/
- ուղիղ մեթոդ /direct method/
- հաղորդակցական մեթոդ /communicative method/
- քերականական-թարգմանական մեթոդ /grammar translation method/

Կարծում ենք, ակտիվ ուսուցման մեթոդը ամենաարդիականն է, քանի որ մեր օրերում առավել քան կարևորվում է օտար լեզվի ակտիվ՝ տեսական և գործնական իմացությունը, որն էլ իր հերթին կարող է նպաստել սովորողի մոտ ստեղծագործական դրսևորումների զարգացմանը: Ինչ խոսք, ինչպիսի մեթոդով էլ կամ դասագրքով էլ առաջնորդվի դասավանդող մանկավարժը, շատ կարևոր է, որ մասնագետը լինի հաճելի զրուցակից և զրուցընկեր իր լսարանի կամ դասարանի համար, որպեսզի սովորողն իրեն զուտ սովորող չզգա, որին պարտադրում են սովորել, այլ մասնագետին ընկալի որպես զրուցընկերոջ, որն իրենց փորձում է ուսուցանել օտար լեզու:Անգլերենն այն միջազգային լեզուն է, որով հաղորդակցվում է աշխարհի բնակչության գրեթե մեկ չորրորդը: Այն մոտ 60 ինքնիշխան պետությունների պաշտոնական լեզուն է, ուստի այս լեզվով համապատասխան գրականության, մեդիա արտադրանքի բազմազանությունը թույլ կտա սովորողին ստեղծագործ կերպով մոտենալ առարկայի ուսումնասիրությանը:

### *1. 3 Դասավանդման իմ փորձը:*

Հաշվի առնելով հետազոտության տեսական մասում իմ կատարած

պնդումները'բերեմ գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման ինտերակտիվ դասի մի օրինակ,որի ընթացքում ,անշուշտ կարելի է զարգացնել սովորողների ինքնուրույնությունը , նաղաձեռնողականությունն ու ստեղծարարությունը:

*Դասարանը'* 4-րդ

*Դասի թեման'*<<Summer holidays,Summer is fun>>

*Դասի տիպը'* Ամփոփում :Գիտելիքների ամրապնդման դաս:

*Դասի կահավորումը՝* Ցուցապաստառ,տեսասահիկ

*Դասին կիրառվող մեթոդները՝* Համաշխարհային սրճարան ,խմբային քննարկումներ,խաճանկար։

*Թեմայի համար հատկացված ժամաքանակը՝* 4 դասաժամ։

*Դասի նպատակը՝*

ա .Գիտելիքներ

**1**-ին և **2**-րդ դասերի ընթացքում աշակերտները սովորում են ամռան ամսիները ,գույները,տարվա եղանակին բնորոշ հագուստների անվանումները,մրգերի ու բանջարեղենների անվանումները, համապատասխան տվյալ եղանակին,ամառային արձակուրդներին երեխաների զբաղմունքները ,խաղերը։

3-րդ և 4-րդ դասերի միջև ընկած ժամանակահատվածում աշակերտները նախապատրաստվում են բանավեճի՝մտածելով՝ինչպես կազմակերպել բանավեճը,ի՞նչ ասել և ի՞նչպես ասել։Ուսուցիչը որոշում է,թե ինչպես պետք է նախապատրաստել դասարանը։

բ .Կարողություններ և հմտություններ

Աշակերտը պետք է կարողանա՝

- Սահուն և հասկանալով ընթերցել բնագիրը,մեկնաբանել ընթերցածի բովանդակությունը, վերարտադրել բնագիրը։
- Խմբային քննարկումների ժամանակ լինել ակտիվ՝ զարգացնելով սոցիալական հմտություններն ու լեզվամտածողությունը։

գ.Արժեքային համակարգ

- Վերաբերմունք արտահայտի բնության պահպանման մասին,գիտակցի բնապահպանական խնդիրների կարևորությունը։
- Իմանա՝ որ եղանակին ինչ հագուստ է հարկավոր կրել։
- Սովորողի ճիշտ գնահատել հանգստի դերը մարդու կյանքում ։

*Դասի վերջնարդյունքները*

- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- Լեզվական գրագիտություն և կարողունակություն
- Աշակերտների ինքնուրույնության ու ստեղծագործականության խթանում:

*Դասի ընթացքը*

Խմբային քննարկումների օգնությամբ սովորողները հաջորդաբար ներկայացնում են ամռան ամիսները, ապա բանավոր հատկանշավորում ամեն մի եղանակը,բանալի բառերը գրելով աղյուսակում: Սովորողները գրում են իրենց սիրած կամ չսիրած գույների և մրգերի մասին և նշում,թե ինչու են սիրում կամ չեն սիրում :Ուսուցիչը ուսումնական նյութը բաժանում է մասերի և նախորոք կազմած 3 խմբերին հանձնարարաում հատվածից դուրս գրել գոյականներն ու ածականներն ,դրանք ենթարկել ձևաբանական վերլուծության և կազմել նախադասություն / summer-գոյական/:Խմբերն աշխատում են ինքնուրույն ,ուսուցիչը չի միջամտում աշխատանքին:Հաջորդիվ ամեն խմբին դրվում է ժամանակ իր աշխատանքը ներկայացնելու:Թեմայի շուրջ գիտելիքներն ավելի առարկայական դարձնելու համար կիրառվում է խմբային աշխատանք 'օգտագործելով զննական մեթոդը:Սովորողներն աշխատում են շարքերով :

Հաջորդիվ ուսուցիչը կիրառում է Համաշխարհային սրճարան մեթոդը որը, գիտելիքի փոխանակաման համակարգված խոսակցական գործնթաց է:Մեթոդի կիրառման ժամանակ սեղանները դրվում են սրճարանների սեղանների նման'միմյանցից որոշակի հեռավորության վրա:Ֆորմալ գործնթացներն ապահովելու համար ուսուցիչը հնարավորություն է տալիս խոսելու բոլորին :Խմբային քննարկումների միջոցով ընդհանու եզրահանգումները նպաստում է,որ սովորողների մասնակցությունը լինի համաչափ և սովորողները հնարավորություն ունենան միմյանցից սովորելու:

Հաջորդիվ գիտելիքն ամրապնդելու սովորողներն բարձրաձայն կարդում են բնագիրը,ապա ուսուցչի հրահանգով պատասխանում հետևյալ հարցերին:

- *Ի՞նչ իմացանք*
- *Ի՞նչ պարզեցինք*

- *Ի՞նչ սովորեցինք*

Գործնական աշխատանքի շրջանակներում կկիրառվի <<Խճանկար>> մեթոդը։Յուրաքանչուր խմբից մեկը կամփոփի իր խմբի աշխատանքը։Աշակերտները բաժանվում են խմբերի։Ուսուցիչը հնարավորություն է տալիս նաև օգտվելու համացանցային հարթակներից։Սովորողներին հանձնարարավում է կատարել հետազոտական փոքրիկ աշխատանք' ներկայացնելով թե ամառային արձակուրդներին ինչով են զբաղվում,ուր են այցելում ,ինչ խաղեր են խաղում ։Եթե խմբում կան սովորողներ ովքեր դժվարանաում են անգլերենով ձևակերպել մտքերը,խմբի մյուս անդամները օգնում են։Դասի ամփոփիչ հատվածում ուսուցչի ակնկալիքն հետադարձ կապ ստեղծելն է։Այդ նպատակով վերջինս հանձնարարավում է բառեր,որոնցով սովորողները կազմում են նախադասություններ' այդպիսով կիրառման մեջ դնելով սովորած բառերը (Summer,holidays,camping ,fishing,swimming,cycling)և այլն։

*Տնային հանձնարարություն'* Գրել ստեղծագործական շարադրություն ամառային արձակուրդների մասին ։

Այսպիսով,կարող ենք արձանագրել,որ ինտերակտիվ ուսուցման և դասավանդման նորարարական մեթոդները հնարավորություն տվեցին ապահովել սովորողների ակտիվ ու համաչափ մասնակցությունը դասին,նրանք ուսումնական նյութն ընկալեցին,զարգացավ խոսքային կարողությունը ,ինքնուրույնությունը ու ստեղծագործականությունը ։

Սովորողների տնային հանձնարարությունից երկու օրինակ :



My Summer holidays.

I Spent Summer vacations in Yerevan, in Blayan School and in Artashat. I helped my father and mother. And I played different games with my friends, for exemple: Football, volleyball. I Spent my vacations so interestingly. I realy liked this Summer, because I played a lot and went to many places.

Vardanyan Arik.
25.09.2023y.



Summer holidays

I think summer is the best time of the year, because it is hot, the surroundings are very beautiful, and we have a great opportunity to relax. Summer is the time for vacations. We can go anywhere, spend our time by the river or lake, swim in warm water, play different games, ride a bike etc. I love summer very mush.

Makaryan Artur
25.09.2023р

Winter
December January February
Summer
June July August
Spring
March April May
Autumn
September October
November
Seasons and Months
English

Համաշխարհային սրճարան մեթոդ։

# Եզրակացություն

Սույն աշխատանքի վերլուծության արդյունքում կատարեցի մի քանի արձանագրումներ,որոնք կամբողջացնեմ և ընդհանրական տեսքի կբերեմ ստորև:Անառարկելի է, որ մարդու գործունեության արդյունավետությունը, մտահղացումների, նախաձեռնությունների իրականացման ուղղությամբ ձեռքբերումներն ու հաջողությունները մեծապես պայմանավորված են իր առջև դրված նպատակների ու խնդիրների տեսլականի նկատմամբ ունեցած լավատեսությամբ, վստահությամբ, այսինքն՝ իր ուժերի նկատմամբ հավատով: Սա հնարավոր է առավելապես այն դեպքում, երբ անձը ճանաչում է ինքն իրեն և բարձր է գնահատում իր կարողություններն ու հնարավորությունները: Սա նշանակում է ինքնավստահ լինել սեփական ուժերի նկատմամբ, ունենալ բարձր ինքնագնահատական:Աշխատության թեման անսպառ ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում,այնուամենայնիվ մի բան հստակ է.եթե անգլերենի դասավանդման ընթացքում ուսուցիչը հիմանական գիտելիքների հաղորդման զուգահեռ նպատակ է դնում զարգացնել սովորողի պատկերավոր մտածողությունը,ինքնուրույն գործելու ու նախաձեռնողական քայլեր կատարելու կարողությունը ,ապա անհրաժեշտ է հաշվի առնել նաև,որ ուսումնառության որոշակի փուլում աշակերտը ունի իր հետաքրքրությունները, առանձնահատկությունները:Այս համատեքստում կրկին ցանկանում եմ շեշտադրել աշակերտակենտրոն ուսուցման կարևորությունը:

Իմ համոզմունքն է,որ սովորողի կարծիքը լսելը,նրան խրախուսելը,ստուգման ընթացքում ոչ թե սխալ, այլ ճիշտ բաղադրիչ շեշտադրելը, սովորողներին ու դասարանը կդարձնեն ավելի ակտիվ ու ներգրավված:Իսկ ահա ստեղծագործական ունակությունների զարգացումն անմիջական գործնթաց է,որը զուգահեռվում է հիմնական գիտելիքների հաղորդմանը,ուստի ուսուցիչը պետք է շփման համար ստեղծի հարմարավետ պայմաններ,որպեսզի ամեն կերպ

խրախուսվի անհատի գիտակցումը և խթանի նրա ինքնուրույնության ու ինքնահաստատմանն ուղղված ջանքերը:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով հետազոտության ընթացքում կատարած արձանագրումները՝ բերենք մի քանի

առաջարկություններ.

- ՏՀՏ դասերի անգլալեզու հարթակների կիրառումը մեծապես կխթանի սովորողների

գործնական կարողությունների զարգացմանը:

- Անգլերենի դասաժամի շրջանակներում կարելի է հաճախակի հանդիպումներ

կազմակերպել անգլախոս հյուրերի հետ, որոնց հետ շփումը բավականին դրական կանդրադառնա սովորողների վրա:

- Անգլերենի դասաժամին անընդհատ նպաստել, որ սովորողները գործեն ինքնուրույն

## Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Թոփուզյան, Մանկավարժական միտք, 2012, «Ժամանակակից ուսուցչին ներկայացվող պահանջները»:

2. Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, 2018:

3https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք:

4 https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf Ուսուցման արդյունավետ հնարներ,Երևան, 2020:

5. Գիտամեթոդական հանդես, Օտար լեզուները Հայաստանում:

6. http://www.publications.ysu.am/wp-content/uploads/2020/01/Kubanyan-A..pdf

Ա. Կուբանյան, Օտար լեզուների դասավանդման խնդիրների շուրջ :

7.Вайсбурд М. Л. “Методы обучения. Выбор за вами”//Иностранные языки в школе /համացանց, 2000., N2